



“ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ” ԵԱՀԿ-ՈՒՄ
(Ներկայացնում է “Արմեդիա” ՏՎԳ-ն)

*Սույն ձեռնարկն իրենից ներկայացնում է դարաբաղյան կարգավորմամբ
անմիջականորեն զբաղվող կառույցի՝ ԵԱՀԿ-ի շրջանակներում
կարգավորման գործընթացին առնչվող փաստաթղթերի ժողովածու, որոնք
ընդունվել են կառույցի Նախարարների խորհրդի նիստերում,
Խորհրդարանական վեհաժողովներում եւ զագաթնաժողովներում:*

*Խմբագիր՝ Աննա Մկրտչյան
Հեղինակ՝ Աննա Կարապետյան*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն էջ 4
2. “Լեռնային Ղարաբաղը” ԵԱՀԿ գազաթնաժողովներում էջ 5
3. “Լեռնային Ղարաբաղը” ԵԱՀԿ Նախարարների խորհրդում էջ 12
4. “Լեռնային Ղարաբաղը” ԵԱՀԿ ԽՎ-ում էջ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ միջազգային կառույցների կողմից ընդունված փաստաթղթերի հավաքագրումը կարելու է նախ խնդրի վերաբերյալ միջազգային հանրային կարծիքը հստակեցնելու նպատակով: ԵԱՀԿ պարագայում այս աշխատանքը հատկապես կարելու է, քանի որ կառույցի տարբեր մարմինների կողմից ընդունված բանաձևերը, հայտարարություններն ու զեկույցներն արտահայտում են կարգավորմամբ անմիջականորեն զբաղվող միջազգային այս կազմակերպության մոտեցումները կարգավորման գործընթացին: Ավելին այդ փաստաթղթերի հավաքագրումն ու վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզել ղարաբաղյան կարգավորման հարցում միջնորդի դեր ստանձնած ԵԱՀԿ-ի, որն իր առաքելությունն իրականացնում է Մինսկի խմբի միջոցով, հայեցակարգը կարգավորման ուղիների, սկզբունքների վերաբերյալ, դրանում տեղի ունեցած փոփոխությունները կարգավորման ողջ գործընթացում: Համեմատության մեջ դիտարկելով մինչև այժմ ԵԱՀԿ մոտեցումներն ու առաջարկները կարգավորման ուղիների առնչությամբ՝ հնարավոր կլինի առավելագույնս օբյեկտիվորեն գնահատել բանակցային գործընթացի դինամիկան եւ պարզել դրա ուղղորդվածությունը: Արդյունքում հնարավոր կլինի առավել հստակ գիտակցել ունեցած հնարավորություններն ու անելիքները՝ առավել հիմնավոր գործողությունների ծրագիր մշակելու նպատակով:

Այս ձեռնարկում անդրադարձ է կատարվել մասնավորապես ԵԱՀԿ Նախարարների խորհրդի, Խորհրդարանական վեհաժողովների եւ գազաթնաժողովների շրջանակներում ընդունված փաստաթղթերին: Այդ համատեքստում ներկայացված են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների որոշ զեկույցներ: Սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ որպես կարգավորման գործընթացով զբաղվող անմիջական մարմնի գործունեությանը եւ այդ ընթացքում նրա կողմից ընդունված եւ հրապարակված փաստաթղթերին անդրադարձ կկատարվի առանձին աշխատությամբ:

“ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ” ԵԱՀԿ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

Ղարաբաղյան հարցի կարգավորմամբ, ինչպես գիտենք, զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի շրջանակներում էլ ընթանում է բանակցային գործընթացը: Ինչպես հակամարտող կողմերը, այնպես էլ միջազգային ուժերը կարևորում են ԵԱՀԿ ՄԽ-ի շրջանակներում բանակցությունների շարունակականությունը եւ համանախագահող երկրների ներդրումը այս հարցում:

ԵԱՀԿ գազաթաժողովները պարբերական բնույթ չեն կրում, դրանք անց են կացվում նախագահող երկրի նախաձեռնությամբ միջազգային՝ մասնավորապես եվրոպական հանրության առջև ծառայած խնդիրների կարգավորման համար: ԵԱՀԿ գազաթաժողովներում ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ առաջին անգամ հիշատակվել է 1994թ.-ին Բուդապեշտում տեղի ունեցած հանդիպման ժամանակ: 1994թ. Բուդապեշտի գազաթաժողովի արդյունքում ընդունվեց "Նոր դարաշրջանում իրական գործընկերության ճանապարհին" խորագրով հռչակագիրը: Տարածաշրջանային հարցերին նվիրված որոշումների հատվածում Ղարաբաղյան հակամարտությանը հատուկ տեղ հատկացվեց "ԵԱՀԿ գործունեության ակտիվացումը՝ կապված ղարաբաղյան հակամարտության հետ" բաժնում:

Այնտեղ ասված է.

1. "Ափսոսանք հայտնելով հակամարտության շարունակականության եւ դրա ողբերգական հետեւանքների կապակցությամբ՝ անդամ-պետությունները ողջունում են ՄԽ անդամ երկրների հետ համագործակցությամբ ՌԴ միջնորդության շնորհիվ 1994թ.-ի մայիսի 12-ին հակամարտող կողմերի միջև ձեռք բերված հրադադարի համաձայնության վերահաստատումը: Նրանք իրենց հավատարմությունը հայտնեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձեւերին եւ ողջունեցին Անվտանգության խորհրդի աջակցությամբ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ քաղաքական ջանքերը: Այդ նպատակով նրանք հակամարտող կողմերին կոչ են անում ավելի ինտենսիվ բանակցություններ սկսել բուն խնդրի շուրջ, այդ թվում՝ անմիջական կապերի հաստատման վերաբերյալ: Այս համատեքստում նրանք հաստատականություն են հայտնում մեծացնելու ԵԱՀԿ-ի կողմից գործադրվող ջանքերը եւ նրանց տրամադրվող աջակցությունը: Նրանք աջակցեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական գործունեությանը, ինչպես նաեւ շնորհակալություն հայտնեցին ՌԴ-ին զգալի ներդրման եւ Մինսկի խմբի մյուս անդամներին անհատական ջանքերի համար: Նրանք պայմանավորվածության եկան կոորդինացնել եւ միավորել բոլոր այդ ջանքերը:
2. Բանակցությունների համար միասնական եւ համաձայնեցված հիմք ստեղծելու նպատակով նրանք գործող նախագահին հանձնարարեցին անդամ-պետությունների հետ խորհրդակցությունների հիման վրա հնարավորինս արագ նշանակել Մինսկի խորհրդաժողովի համանախագահներին, ինչպես նաեւ ապահովել միջնորդական եւ բանակցային գործունեության ամբողջական կոորդինացում: Նշանակված համանախագահները, բանակցությունների ժամանակ բոլոր իրենց քայլերում առաջնորդվելով ԵԱՀԿ սկզբունքներով ու համաձայնեցված մանդատներով, համատեղ կնախագահեն Մինսկի խմբի հանդիպումների ժամանակ եւ համատեղ հաշվետվությամբ հանդես կգան

Նախագահի առջեւ: Նրանք պարբերաբար կտեղեկացնեն Մշտական հանձնաժողովին իրենց գործունեության ընթացքի մասին:

3. Այս գործընթացի շրջանակներում որպես առաջին քայլ նրանք հանձնարարեցին Մինսկի խորհրդաժողովի համանախագահներին ՌԴ եւ ՄԽ մյուս անդամների աջակցությամբ եւ նրանց հետ համագործակցությամբ, գոյություն ունեցող հրադադարի մասին համաձայնությանը հետագայում եւս հետեւելու նպատակով եւ հիմնվելով բանակցային գործընթացում արդեն իսկ ձեռք բերված առաջխաղացման վրա, անցկացնել օպերատիվ բանակցություններ՝ ուղղված զինված հակամարտության դադարեցման մասին քաղաքական պայմանագրի կնքմանը, որի իրագործումը կվերացնի հակամարտության հիմնական հետեւանքները բոլոր կողմերի համար եւ հնարավորություն կտա հրավիրել Մինսկի խորհրդաժողովը: Նրանք խնդրեցին ՄԽ համանախագահներին շարունակել կողմերի հետ համատեղ աշխատանքը՝ ուղղված վստահության ավելացմանը, հատկապես հումանիտար ոլորտում: Նրանք ընդգծեցին ինչպես առանձին պետությունների, այնպես էլ միջազգային կառույցների մակարդակով տվյալ տարածաշրջանի բնակչությանը հումանիտար օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության գիտակցումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով փախստականներին:
4. Նրանք եկան համաձայնության, որ ելնելով հակամարտության կողմերի տեսակետներից՝ վերոնշյալ համաձայնությունը հնարավորություն կտար որպես համաձայնության իրագործման կարեւորագույն տարր՝ խաղաղարար բազմազգ ուժեր տեղակայել: Նրանք քաղաքական պատրաստակամություն հայտնեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձեռի ընդունման դեպքում հակամարտող կողմերի միջեւ զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնության կնքումից հետո ԵԱՀԽ բազմազգ խաղաղարար ուժեր տրամադրել: Նրանք նախագահին առաջարկեցին հնարավորինս կարճ ժամանակահատվածում այդպիսի ուժերի կազմի եւ գործունեության ծրագիր մշակել, որը կազմակերպված կլինի 1992թ.-ի Հելսինկյան փաստաթղթի III գլխի դրույթների հիման վրա՝ եւ ամբողջովին կհամապատասխանի ՄԱԿ-ի կանոնակարգին: Այդ գործում գործող նախագահը կհիմնվի Մինսկի կոնֆերանսի համանախագահների աջակցության եւ ՄԽ օգնության, ինչպես նաեւ Գերագույն քարտուղարի կողմից տրամադրվող աջակցության վրա, համապատասխան խորհրդակցություններ անցկացնելուց հետո նա Վիենայում կստեղծի խորհրդատվական բնույթ կրող որոշումների մշակման խումբ, որի լիազորությունների մեջ կմտնի այդ ուժերի թվի եւ հատկանիշների, հրամանատարության ու դրանց կառավարման, նյութատեխնիկական ապահովման, համապատասխան ստորաբաժանումների եւ ռեսուրսների բաշխման, ուժերի օգտագործման կարգի եւ դրանք տրամադրող պետությունների հետ համաձայնությունների վերաբերյալ որոշումների մշակումը: Նա աջակցության համար կդիմի ՄԱԿ-ին՝ հաշվի առնելով տեխնիկական, փորձագիտական եւ խորհրդատվական օգնություն տրամադրելու՝ նրա հայտնած պատրաստակամությունը: Նա նաեւ ԵԱՀԽ խաղաղարար ուժերի հնարավոր տեղակայման դեպքում կձգտի

երկարաժամկետ քաղաքական աջակցություն ստանալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից:

5. Այդպիսի նախապատրաստական աշխատանքների եւ 1992թ. Հելսինկյան փաստաթղթի III գլխի հիման վրա կողմերի միջեւ համաձայնության կնքումից եւ Մինսկի խորհրդածողովի համանախագահողների միջոցով գործող նախագահին պաշտոնապես օգնության համար դիմելուց հետո Մշտական խորհուրդը որոշում կկայացնի ԵԱՀԽ խաղաղարար գործունեության ծավալման վերաբերյալ:

Այսպիսով՝ գազաթաժողովում ամուր հիմք դրվեց Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման եւ բանակցային գործընթացի համար: Ավելի քան մեկ տասնամյակ ԵԱՀԿ ՄԽ-ն շարունակում է ջանքերը՝ ուղղված Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորմանը՝ միտված Մինսկի խորհրդածողովն իրականություն դարձնելուն: Ինչպես հավաստում են իրենք՝ կարգավորման միջնորդները, այդ ընթացքում հաջողվել է որոշակիորեն մերձեցնել կողմերի տեսակետները, տարաձայնություններ, սակայն, դեռեւս առկա են: Թե բանակցային գործընթացում ինչ փոփոխություն է կրել ԵԱՀԿ միասնական դիրքորոշումը Ղարաբաղյան կարգավորման սկզբունքների շուրջ, պարզ կարող է լինել կառույցի շրջանակում ընդունված փաստաթղթային ողջ բազայի դիտարկման արդյունքում:

1. "Հակամարտությունների նախազգուշացումը, կանխարգելումը եւ ճգնաժամների կառավարումը (այդ թվում՝ փաստերի արձանագրման առաքելություններն ու զեկուցողների առաքելությունները, խաղաղության պահպանմանն ուղղված ԵԱՀԽ գործունեությունը), վեճերի խաղաղ կարգավորումը"

ԵԱՀԿ Բուդապեշտի գազաթաժողովը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիների շուրջ կառույցի մոտեցման տեսանկյունից կառուցողական էր: Չնայած դրան՝ երկու տարի անց Լիսաբոնում տեղի ունեցած գազաթաժողովը հակասությունների պատճառ դարձավ, որի արդյունքում այդպես էլ չհաջողվեց հանդես գալ միասնական հայտարարությամբ, ինչի հետեւանքով էլ Ղարաբաղյան հակամարտության մասին որեւէ որոշում չընդունվեց, պարզապես այդ հարցի շուրջ արված հայտարարությունները տեղափոխվեցին հավելված:

1996թ.-ին Լիսաբոնում տեղի ունեցած գազաթաժողովի ժամանակ Հայաստանը վետո կիրառեց համաժողովի եզրափակիչ փաստաթղթի մեջ նախագահող երկրի ներկայացուցչի ձեռնարկման նկատմամբ, արդյունքում հայտարարությունը տեղափոխվեց հավելված:

ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարության մեջ ասված էր.

"Ինչպես բոլորին հայտնի է, վերջին երկու տարիների ընթացքում չի հաջողվել առաջընթաց արձանագրել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման եւ Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականության հարցերում: Ես ցավով արձանագրում եմ, որ Մինսկի խորհրդածողովի համանախագահների ջանքերը՝ ուղղված կարգավորման սկզբունքների վերաբերյալ կողմերի կարծիքների հաշտեցմանը, հաջողությամբ չեն պսակվել:

ՄԽ համանախագահների կողմից առաջարկվել են երեք սկզբունքներ, որոնք

պետք է հակամարտության կարգավորման մաս դառնան: Այդ սկզբունքները արժանացել են Մինսկի խմբի բոլոր անդամներ հավանությանը՝ բացի մեկից: Դրանք հետեւյալն են՝

- Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականություն,
- համաձայնագրում հաստատված, ինքնորոշման իրավունքի վրա հիմնված Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակ, որը նրան ինքնավարության բարձր աստիճան է ապահովում Ադրբեջանի կազմում,
- Լեռնային Ղարաբաղի ու նրա բնակչության երաշխավորված անվտանգություն, այդ թվում բոլոր կողմերի փոխադարձ պարտավորություն՝ կատարելու համաձայնագրի բոլոր կետերը:

Ես ցավով արձանագրում եմ, որ անդամ-երկրներից մեկը չի համաձայնվել այս սկզբունքների հետ: Այս սկզբունքները ստացել են բոլոր մյուս անդամ-երկրների աջակցությունը”:

Ի պատասխան այս հայտարարության՝ ՀՀ պատվիրակությունը հանդես է եկել սեփական հայտարարությամբ, որը նույնպես տեղ է գտել գազաթաժողովի արձանագրության հավելվածում:

Հայաստանի պատվիրակության հայտարարությունը հետեւյալն էր՝

”Հայաստանյան պատվիրակությունն իր մտահոգությունն է հայտնում ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարության հետեւյալ կետերի վերաբերյալ:

1. Այս հայտարարությունը չի արտացոլում Մինսկի խմբի հոգին ու մանդատի էությունը, որը հաստատվել է 1994թ.-ի Բուդապեշտի գազաթաժողովի ժամանակ եւ ենթադրում է քաղաքական համաձայնության շուրջ բանակցություններ անցկացնել: Կարգավիճակի հարցը ուղիղ բանակցությունների ժամանակ քննարկման թեմա է հանդիսացել, որոնք ավարտին չեն հասցվել:
2. Այս հայտարարության մեջ ԼՂ կարգավիճակ է կանխորոշվում, ինչը հակասում է ԵԱՀԿ Նախարարների խորհրդի որոշմանը, համաձայն որի՝ այն պետք է որոշվի Մինսկի խորհրդաժողովի ժամանակ, որն էլ պետք է սկսվի քաղաքական համաձայնության հաստատումից հետո:
3. Հայկական կողմը համոզված է, որ հակամարտության կարգավորումը կարելի է գտնել ԵԱՀԿ Հելսինկյան ակտում ամրագրված միջազգային իրավունքի եւ սկզբունքների հիման վրա՝ մասնավորապես ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա:
4. Փոխզիջումների հասնելու նպատակով հայկական կողմը պատրաստ է շարունակել ինտենսիվ բանակցություններն ինչպես ՄԽ շրջանակներում, այնպես էլ այն խմբի կողմից կոորդինացվող երկկողմ հաղորդակցման մակարդակով”:

1999թ.-ին Ստամբուլում նման կտրուկ հայտարարություններ չհնչեցին: ԵԱՀԿ հերթական գազաթաժողովի ընթացքում դրականորեն գնահատվեցին ԵԱՀԿ

ՄԽ շրջանակներում ընթացող բանակցություններն ու երկու երկրների նախագահների միջև ակտիվացած երկխոսությունը: Բացի այդ, եւս մեկ անգամ ընդգծվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեռնարկի կարեւորությունն ու նպատակահարմարությունը:

Ստամբուլյան գազաթաժողովի հռչակագրում մասնավորապես ասվում է. "20. Մենք ստացել ենք դարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ստեղծված իրավիճակի եւ վերջին իրադարձությունների մասին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների զեկույցը եւ դրական ենք գնահատում նրանց ջանքերը: Մեզ հատկապես ուրախացնում է ակտիվացած երկխոսությունը Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջև, որոնց պարբերական հանդիպումները խնդրի ամուր եւ ամբողջական լուծման որոնման գործընթացին դինամիկա հաղորդելու հնարավորություն են ընձեռում: Մենք միանշանակ աջակցում ենք այդ երկխոսությանը եւ կոչ անում շարունակել այն՝ հույս ունենալով, որ ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում բանակցությունները կվերսկսվեն: Միաժամանակ հաստատում ենք, որ ԵԱՀԿ-ն եւ ՄԽ-ն, որը շարունակում է կարգավորման ուղիների որոնման ամենահարմար ձեռնարկը մնալ, պատրաստ են խաղաղ գործընթացի հետագա սատարմանը եւ դրա հետագա իրագործմանը, այդ թվում՝ կողմերին անհրաժեշտ օգնություն տրամադրելով:

21. Մենք ողջունում ենք այս տարի Երեւանում ԵԱՀԿ գրասենյակի բացումը եւ Բաքվում նման գրասենյակի բացման մասին որոշումը: Այս քայլերը թույլ կտան ամրապնդել մեր համագործակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի հետ":

2010թ.-ին Աստանայում տեղի ունեցած գազաթաժողովի արդյունքում ընդունված արձանագրության մեջ չնայած անմիջապես չեն հիշատակվում դարաբաղյան հակամարտությունն ու դրա խաղաղ կարգավորման գործընթացի ընթացքն ու ձեռքբերումները, սակայն այն դրականորեն է գնահատվում հայկական կողմի համար, քանի որ եւս մեկ անգամ հաստատում է միջազգային իրավունքի երեք սկզբունքների հավասարությունը:

Հռչակագրում մասնավորապես ասվում է.

"Առավել մեծ ջանքեր պետք է գործադրվեն ԵԱՀԿ գոտում հակամարտությունները խաղաղ ճանապարհով եւ բանակցային մեթոդով՝ համաձայնեցված ձեռնարկերի շրջանակում լուծելու համար՝ ամբողջովին հարգելով միջազգային իրավունքի նորմերը եւ սկզբունքները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրությունում, ինչպես եւ Հելսինկյան եզրափակիչ ակտում: Նոր ձգնաժամերը պետք է կանխարգելվեն: Վերահաստատում ենք ՄԱԿ-ի կանոնադրության եւ Հելսինկյան եզրափակիչ ակտի նպատակների հետ անհամատեղելի ձեռով ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման անթույլատրելիությանը մեր նվիրվածությունը":

Բացի այդ, գազաթաժողովի շրջանակում ընդունվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողների մասնակցությամբ հնգակողմ հայտարարություն, որը մեկ անգամ եւս ընդգծում է, որ դարաբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի

միջազգային իրավունքի երեք հիմնարար սկզբունքների (ազգերի ինքնորոշում, տարածքային ամբողջականություն, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում) հիման վրա:

"ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ CIO.GAL/200/10

1 դեկտեմբերի, 2010

Համատեղ հայտարարություն

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների եւ Ադրբեջանի ու Հայաստանի նախագահների կողմից Ղազախստանում՝ Աստանայում, ԵԱՀԿ գազաթնաժողովի ժամանակ

Ղազախստանում՝ Աստանայում, ԵԱՀԿ գազաթնաժողովի առիթով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները (Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևը, Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնը, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Ռոդհամ Քլինթոնը), Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եկել են համաձայնության, որ ժամանակն է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու ուղղությամբ առավել վճռական քայլեր ձեռնարկել: Այս համատեքստում նրանք հղում են կատարել Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների, ՌԴ նախագահի հետ 2008թ. նոյեմբերի 2-ին Մոսկվայում եւ 2010թ. հոկտեմբերի 27-ին Աստրախանում հրապարակված համատեղ հայտարարություններին: Այնուհետեւ նրանք համաձայնվել են, որ խաղաղ, բանակցությունների վրա հիմնված կարգավորումը կայունություն եւ անվտանգություն կբերի, եւ որ դա տարածաշրջանի ժողովուրդներին իրական հաշտեցում բերելու միակ ուղին է:

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները վերահաստատում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջնական կարգավորում փնտրելու իրենց պատրաստակամությունը՝ հիմնված մջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի, ՄԱԿ-ի Կանոնադրության, Հելսինկիի եզրափակիչ ակտի, ինչպես նաեւ նախագահներ Մեդվեդևի, Սարկոզիի եւ Օբամայի՝ 2009թ. հուլիսի 10-ին Լ'Աքվիլայի եւ 2010թ. հունիսի 26-ին Մուսկոկայի հայտարարությունների վրա:

ԵԱՀԿ համանախագահող երեք երկրներն իրենց աջակցությունն են երաշխավորել Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահներին այն հարցում, որ նրանք խաղաղ կարգավորման հասնելու անհրաժեշտ որոշումներ կկայացնեն: Նրանք Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներից պահանջել են նոր եռանդով փորձել հաղթահարել այն խնդիրները, որոնք դեռ մնում են Հիմնարար Սկզբունքներում, համանախագահներին հանձնարարել են հակամարտության կողմերի հետ շարունակել այս ջանքերին աջակցելու իրենց աշխատանքը: Բանակցությունների համար առավել բարենպաստ մթնոլորտ ձեւավորելու նպատակով նրանք կոչ են արել լրացուցիչ քայլեր ձեռնարկել հրադադարի ռեժիմն ապահովելու եւ բոլոր ոլորտներում վստահությունն ամրապնդելու ուղղությամբ":

Այսպիսով՝ ԵԱՀԿ-ն եղել է մնում է դարաբաղյան հակամարտության կարգավորման եւ բանակցային գործընթացի համար լավագույն ձեւաչափը:

Արդեն իսկ մեծ աշխատանք է կատարված այս ուղղությամբ ու բավական երկար ուղի է անցած, ինչը, հուսանք, կտա սպասված արդյունքները: Միայն երեք սկզբունքների հավասարության վրա հիմնված կառուցողական ու խաղաղ բանակցությունների միջոցով կարելի է հասնել հիմնախնդրի հարատև լուծմանն ու կողմերի հաշտեցմանը:

“ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ” ԵԱՀԿ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ԵԱՀԿ նախարարների խորհուրդը հիմնվել է 1990թ.-ին՝ որպես Արտգործնախարարների խորհուրդ, 1992թ.-ին Հելսինկյան փաստաթղթերով այն ամրագրվել է որպես ԵԱՀԿ որոշում ընդունող եւ կառավարող կենտրոնական մարմին, որը մեծ լիազորություններ ունի հակամարտությունների կանխարգելման եւ ճգնաժամերի կառավարման բնագավառում: Նախարարների խորհուրդը իրականացնում է որոշումների կայացման եւ կառավարման գործառույթները ԵԱՀԿ գազաթաժողովների միջեւ ընկած ժամանակահատվածում եւ ԵԱՀԿ կենտրոնական կառույցներից մեկն է հաղիսանում: Խորհրդի հանդիպումները տեղի են ունենում տարին մեկ անգամ՝ նախագահի լիազորությունների ավարտի շրջանում՝ ԵԱՀԿ-ին առնչվող խնդիրները քննարկելու եւ դրանց վերաբերյալ որոշումներ ընդունելու նպատակով:

Ղարաբաղյան հակամարտությունը, լինելով ԵԱՀԿ շրջանակում գերակա խնդիրներից մեկը, միշտ գտնվել է ԵԱՀԿ Նախարարների խորհրդի ուշադրության կենտրոնում եւ ամենամյա հանդիպումների ժամանակ հաճախակի քննարկումների առարկա է եղել: Առաջին անգամ ԵԱՀԿ Նախարարների խորհուրդը Ղարաբաղյան հակամարտությանն անդրադարձել է 1995թ. Բուդապեշտում տեղի ունեցած Նախարարների խորհրդի հինգերորդ հանդիպման ժամանակ: Նախագահի ամփոփման խոսքում "1995թ.-ի ձեռքբերումները, նորամուծությունները" բաժնում ասված է.

"Մինչ այժմ չի հաջողվել համաձայնեցնել ղարաբաղյան հակամարտության կարգավորման սկզբունքները: Նախարարները իրենց բավարարվածությունն են հայտնել վերջին շրջանում ձեռք բերված առաջընթացով, որի մասին զեկուցել են ՄԽ համանախագահները, վերջինս շարունակում է մնալ հակամարտության կարգավորման միակ ձեւաչափը: Վերջին ամիսների ընթացքում ՄԽ-ն դրդում էր կողմերին առաջընթացի: Հայտարարվել է հակամարտության կարգավորման շուրջ հարցերի քննարկման համար ուղիղ կապերի հաստատման մտադրության մասին: ՄԽ շրջանակներում գործադրվող ջանքերին աջակցելու նպատակով գործող նախագահը իր սեփական ներկայացուցիչն է նշանակել: Բարձր մակարդակի պլանավորման խումբը ավարտել է նախատեսվող խաղաղապահ գործողությունների ծավալումը: Սակայն նմանատիպ գործողությունների ծավալման համար դեռեւս համապատասխան պայմաններ չկան":

Նույն հանդիպման ժամանակ Նախարարների խորհուրդը որոշում է ընդունել ԵԱՀԿ Մինսկի գործընթացի վերաբերյալ, որտեղ ասվում է.

"Նախարարների խորհուրդը

- հաստատում է, որ ԵԱՀԿ Մինսկի գործընթացը մնում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման միակ ձեւաչափը,
- ողջունում է հակամարտության կողմերի հաստատակամությունը հետագայում եւս պահպանելու 1994թ.-ի մայիսի 12-ին հաստատված հրադադարը,

- կոչ է անում կողմերին անմիջապես ազատ արձակել բոլոր ռազմագերիներին եւ հակամարտության առնչությամբ ձերբակալված անձանց եւ ապահովել ԿԽՄԿ ներկայացուցիչների անխոչընդոտ մուտքը բոլոր ազատագրկման վայրեր եւ բոլոր բանտարկվածների մոտ,
- աջակցում է գործող նախագահի հետ կոորդինացված Մինսկի կոնֆերանսի համանախագահների ջանքերին՝ ուղղված առանց որեւէ հետաձգման զինված հակամարտության դադարեցման վերաբերյալ քաղաքական համաձայնության կնքմանը: Նման համաձայնության իրագործումը կվերացնի հակամարտության հետեւանքները բոլոր կողմերի համար եւ հնարավորություն կտա կարճ ժամանակում հրավիրել Մինսկի կոնֆերանսը: Համաձայնության ստորագրումը պայմաններ կստեղծի Մշտական հանձնաժողովի կողմից խաղաղապահ գործողությունների ծավալման վերաբերյալ բարձր մակարդակի պլանավորման խմբի արժեքավոր խորհուրդների հիման վրա որոշման կայացման համար, վերջինիս աշխատանքը պետք է շարունակվի,
- ողջունում է հակամարտության կարգավորման սկզբունքների շուրջ համաձայնության գալու համար համանախագահների կոորդինացմամբ ուղիղ կապերի հաստատման հաստատակամության դրսեւորումը եւ կոչ է անում դա անել շատ արագ,
- հաշվի է առնում կողմերի ցուցաբերած պատրաստակամությունը՝ քննարկելու առանցքային հարցերը՝ հնարավորինս արագ համաձայնության գալու նպատակով”:

1997թ. Կոպենհագենում կայացած ԵԱՀԿ Նախարարների խորհրդի վեցերորդ հանդիպման ժամանակ Նախարարների խորհրդին ներկայացվել է Մինսկի Կոնֆերանսի համանախագահների զեկույցը: Գործող նախագահը ողջունել է համանախագահների ջանքերը եւ հայտարարել, որ լիովին միանում է այդ հարցի շուրջ նրանց զեկույցին: Նա առաջարկել է համանախագահներին շարունակել իրենց գործը եւ կոչ է արել բոլոր կողմերին անհապաղ վերսկսել բանակցությունները համանախագահների առաջարկների հիման վրա: ԵԱՀԿ Նախարարների խորհրդին Մինսկի կոնֆերանսի համանախագահների՝ Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ զեկույցում ասված է.

1. 1997թ.-ին ԵԱՀԿ ՄԽ համանախագահներն են Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ն եւ Ֆրանսիան: ԱՄՆ-ն եւ Ֆրանսիան Գործող նախագահի կողմից նշանակվել են անդամ-երկրների հետ խորհրդակցությունների հիման վրա, այն բանից հետո, երբ Ֆինլանդիան հայտարարեց, որ 1996թ. վերջում վայր է դնում ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսի համանախագահի պարտականությունները:
2. Համաձայն Ղարաբաղյան հակամարտության հետ կապված ԵԱՀԿ գործունեության ակտիվացման 1994թ.-ի դեկտեմբերի 6-ի Բուդապեշտի գազաթաժողովի որոշման՝ համանախագահությունը 1997թ. ընթացքում շարունակում էր նպաստել հրադադարի վերաբերյալ համաձայնության կատարմանը եւ կողմերի միջեւ զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնության կնքմանը, որի իրագործումը կվերացնեք հակամարտության հետեւանքները բոլոր կողմերի համար եւ հնարավորություն կտար հրավիրել Մինսկի կոնֆերանսը: Ընդ որում,

համանախագահները հիմնվում էին Բուդապեշտի գազաթափողովի այն հայտարարության վրա, որ այդ համաձայնության կնքումը հնարավորություն կտար նաև տեղակայել ԵԱՀԿ բազմազգ խաղաղապահ ուժերը որպես համաձայնության իրականացման կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: Համանախագահները նաև հաշվի էին առնում, որ 1996թ. դեկտեմբերի 3-ի ԵԱՀԿ գազաթափողովի ժամանակ գործող նախագահը հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ իր ամսուսանքն է հայտնել հակամարտության կարգավորման գործընթացում առաջընթացի բացակայության կապակցությամբ եւ հաստատել է դրա կարգավորման սկզբունքները, Հայաստանի պատվիրակությունը հանդես է եկել պատասխան հայտարարությամբ:

3. 1997թ. ապրիլին կայացած բանակցությունների փուլը պարզ ցույց տվեց, որ բանակցությունները փակուղի են մտել, որի համար հատկանշական են վիճաբանություններն ու անօգուտ քննարկումները: 1997թ. մայիսի ընթացքում համանախագահները միավորել են իրենց գաղափարները եւ միասնական մոտեցում են ձեռավորել բազմակողմանի կարգավորմանը: Այն երկու խումբ խնդիրներ է ընդգրկում: Մի խումբը ներառում է զինված հակամարտության դադարեցման առաջիկա միջոցառումները, այդ թվում գորքերի դուրսբերում, խաղաղապահ բազմազգ ուժերի տեղակայում, տեղահանվածների վերադարձ, ամբողջ բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ, շրջափակումների եւ էմբարգոների վերացում, ամբողջ տարածաշրջանում հաղորդակցության կարգավորում: Հարցերի երկրորդ խումբը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշմանը, որը կստանա Մինսկի կոնֆերանսի հավանությունը: Հարցերի այս երկու խմբերի բաժանումը կոչված էր հնարավորություն տալ կողմերին բանակցություններ վարել դրանցից յուրաքանչյուրի շուրջ եւ դրանք իրականացնել իրենց տեմպերով, այն պարզ գիտակցմամբ, որ ի վերջո բոլոր չլուծված հարցերը պետք է լուծում ստանան: 1997թ.-ի մայիսի 31-ից հունիսի 1-ը համանախագահները ներկայացրին այդ նոր առաջարկները Երեւանում, Ստեփանակերտում եւ Բաքվում: Միաժամանակ համանախագահները մատնացույց էին անում կարգավորման ավելի լայն համատեքստը, մասնավորապես, խաղաղության վերականգման հետ կապված տարածաշրջանի բոլոր երկրների շահը:
4. 1997թ. հունիսի 23-ին Դենվերում կայացած հանդիպման ընթացքում Ռուսաստանի, ԱՄՆ եւ Ֆրանսիայի նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որով կոչ արեցին կողմերի ղեկավարներին դրական մոտեցում ցուցաբերել երեք համանախագահների կողմից իրենց փոխանցված առաջարկին եւ ընդգծեցին, որ այդ առաջարկը հաշվի է առնում բոլոր կողմերի օրինական շահերն ու մտահոգությունները եւ լավ հիմք է հանդիսանում բոլորի համար ընդունելի համաձայնության համար Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնահարցը բազմիցս քննարկվել է համանախագահ երկրների նախագահների, վարչապետների եւ արտգործնախարարների կողմից միմյանց միջեւ, ինչպես եւ Հայաստանի ու Ադրբեյջանի նախագահների, վարչապետների եւ արտգործնախարարների հետ:
5. 1997թ. ընթացքում Մինսկի կոնֆերանսի եւ ՄԻՍ համանախագահները բազմիցս այցելել են տարածաշրջան, որտեղ հանդիպել են հակամարտության կողմերի

ղեկավարներին եւ կոչ են արել նրանց անհապաղ անցնել զինված հակամարտության դադարեցման մասին Պայմանագրի նախագծի ուղղությամբ կառուցողական աշխատանքին: 1997թ. հոկտեմբերին հայկական եւ ադրբեջանական կողմերը համանախագահներին պատրաստակամության են հայտնել բանակցությունների հիմք ընդունել համանախագահների վերջին առաջարկը, որը նախատեսում է դարաբաղյան հակամարտության փուլային լուծում, ըստ որի՝ զինված հակամարտության դադարեցման մասին Պայմանագրով կողմերը պարտավորվում են շարունակել բարեխղճորեն վարել բանակցությունները հակամարտության բազմակողմ անհապաղ կարգավորման ուղղությամբ, ինչը կսահմանի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը եւ կլուծի Լաչինի, Շահումյանի եւ Շուշիի բարդ խնդիրը:

6. 1997թ. հոկտեմբերի 10-ին ԵՄ գազաթաժողովի շրջանակներում տեղի ունեցավ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը, ինչի արդյունքում արվեց հայտարարություն, որում նշվում էր, որ Հայաստանը եւ Ադրբեջանը նախկինի նման հավատարիմ են մնում դարաբաղյան հակամարտության քաղաքական ճանապարհով խաղաղ կարգավորմանը, առաջին հերթին բանակցությունների միջոցով: Ադրբեջանը եւ Հայաստանը համարում են, որ ՄԽ շրջանակներում Մինսկի կոնֆերանսի համանախագահների ակտիվությունը ուղղված է հիմքերի ձեւավորմանը, որը հակամարտության բոլոր կողմերի կառուցողական մոտեցման դեպքում հնարավորություն կտա իրական առաջխաղացում արձանագրել հակամարտության կարգավորման գործընթացում: Ադրբեջանը եւ Հայաստանը կարծում են, որ համանախագահների վերջին առաջարկությունները հուսադրող հիմք են ստեղծում ՄԽ շրջանակներում բանակցություններ սկսելու համար:
7. Այն բանից հետո, ինչ Ադրբեջանն ու Հայաստանը ընդունեցին համանախագահների առաջարկը որպես բանակցությունների հիմք, 1997 նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին համանախագահները կենտրոնացան Լեռնային Ղարաբաղից նման պատասխան ստանալու վրա: Սակայն Լեռնային Ղարաբաղը շարունակում էր բացասական դիրք գրավել համանախագահների առաջարկի հիման վրա բանակցությունները վարելու նկատմամբ:
8. Գործող նախագահի ղեկավարության տակ աշխատող Բարձր մակարդակի պլանավորման խումբը արդյունավետ օգնություն էր տրամադրում համանախագահներին: Գործող նախագահի անձնական ներկայացուցիչը եւ նրա դաշտային օգնականները նույնպես աջակցում էին համանախագահներին:
9. ՄԽ համանախագահներն ու անդամները Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցությամբ համառորեն ջանքեր են գործադրել ռազմագերիների եւ հակամարտության հետ առնչություն ունեցող անձանց ազատ արձակման նպատակով: Ապրիլին նման համատեղ ջանքերի արդյունքում ազատ են արձակվել եւ հայրենիք են վերադարձել ընդհանուր առմամբ 26 ռազմագերիներ եւ բռնի կերպով պահվող մարդիկ: Համանախագահությունը նաեւ ուղիղ կապ էր հաստատել փախստականների հարցերով ՄԱԿ Գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ եւ ողջունում է նրա ջանքերը:
10. Համանախագահները ցավում են, որ զինված հակամարտության դադարեցման մասին Պայմանագրի շուրջ համաձայնության դեռ չեն եկել:

Համանախագահությունը գիտակցում է իր համառ ջանքերի շարունակման անհրաժեշտությունը՝ կարգավորման հասնելու համար: Սակայն կողմերը իրենց հերթին պետք է գիտակցեն, որ միայն գոյություն ունեցող հրադադարի անհապաղ վերածումը ամուր խաղաղության տարածաշրջանի ողջ ժողովրդին հնարավորություն կտա ապրել նորմալ եւ արդյունավետ կյանքով ժողովրդավարական կառույցների առկայության, աճող բարեկեցության եւ խոստումնալից ապագայի դեպքում:

ԵԱՀԿ Նախարարների խորհրդի 1998թ. Օսլոյում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման փուլային տարբերակի մասին այլեւս չխոսվեց, փոխարենը կարեւորվեցին հրադադարի պահպանումը եւ վստահության ձեւավորման նպատակով ռազմագերիների ազատ արձակման հարցերը:

Գործող նախագահի ամփոփման խոսքի մեջ ասված էր.

"Նոյեմբերի 23-26-ին գործող նախագահը այց կատարեց հարավկովկասյան երկրներ, այդ թվում ՀՀ եւ Ադրբեջանի Հանրապետություն: Այցի ընթացքում նա հանդիպումներ ունեցավ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ եւ ծանոթացավ տարածաշրջանի իրավիճակին: Բոլոր կողմերը համաձայն են, որ ԵԱՀԿ Մինսկի գործընթացն ապահովում է խաղաղ գործընթացի շարունակության համար անհրաժեշտ շրջանակները: Կողմերը կրկին հաստատել են հրադադարի մասին համաձայնությունը պահպանելու իրենց պարտավորվածությունը: Գործող նախագահի առաջարկով բոլոր կողմերը համաձայնության եկան ռազմագերիների փոխանակման շուրջ՝ որպես վստահության ամրապնդման միջոցներից մեկի: ԵԱՀԿ գործող նախագահին ներկայացվել է Մինսկի խորհրդածողովի համանախագահների զեկույցը ղարաբաղյան զինված հակամարտության կարգավորմանն ուղղված իրենց ջանքերի վերաբերյալ: Գործող նախագահը գոհունակությամբ փաստում է համանախագահների ակտիվ գործունեությունը 1998թ.-ի ընթացքում: Այդ կապակցությամբ նա կոչ է անում հակամարտող կողմերին առանց հետաձգման վերսկսել բանակցությունները ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում հնարավորինս արագ հակամարտության համակողմանի կարգավորմանն ուղղված բոլորի համար ընդունելի հիմքի ձեւավորման նպատակով: Նա նաեւ կոչ է անում ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին շարունակել ջանքեր գործադրել բանակցային գործընթացի ակտիվացման եւ կարգավորում գտնելու ուղղությամբ: ԵԱՀԿ գործող նախագահը համոզմունք է հայտնում, որ բոլոր կողմերը պետք է քաղաքական կամք եւ պատրաստակամություն դրսևորեն՝ ընդունելու բոլորի օրինական շահերն ու մտահոգությունները: Համանախագահների աջակցության դեպքում դա կարող է եւ պետք է թույլ տա կարգավորել հակամարտությունը, ամուր խաղաղություն եւ կայունություն ապահովել հարավկովկասյան տարածաշրջանում":

Ղարաբաղյան հակամարտությանն անդրադարձ է կատարվել նաեւ 1998թ.-ին գործող նախագահի գործունեության մասին զեկույցում.

"15. ԵԱՀԿ-ն չի դադարեցնում դարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված ջանքերը: ՄԽ համանախագահները շարունակում են աշխատել հակամարտության կողմերի հետ բանակցությունների հնարավորինս արագ վերականգման ուղղությամբ: Հրադադարի ամրապնդման եւ կողմերի միջեւ վստահության ձեւավորման գործում չափազանց մեծ դեր է խաղում Գործող նախագահի անձնական ներկայացուցչի եւ նրա գործընկերների կողմից իրականացվող իրավիճակի վերահսկողությունը շփման գծի երկայնքով":

Զեկույցում հատուկ ուշադրություն է հատկացվել ԵԱՀԿ խաղաղապահ առաքելությանը (հակամարտությունների կանխարգելման գործում ԵԱՀԿ ընդհանուր դերի ներքո).

"5. Բուդապեշտի փաստաթղթում հիշատակվում է նաեւ ԵԱՀԿ խաղաղապահ գործողությունների ծավալման հնարավորության մասին դարաբաղյան հակամարտության կողմերի միջեւ խաղաղության համաձայնության դեպքում: 2-րդ գլխի 4-րդ կետում ("Տարածաշրջանային հարցեր") նշված է, որ հակամարտությունը հնարավորություն կտար խաղաղապահ բազմազգ ուժեր տեղակայել՝ որպես համաձայնության իրականացման կարենորագույն բաղադրիչներից մեկը: Այդ համատեքստում որոշվել է ձեւավորել Բարձր մակարդակի պլանավորման խումբ, որին հանձնարարված կլինի խորհրդատվություն մշակել, այդ թվում նաեւ այդ ուժերի ծավալի եւ հատկանիշների, հրամանատարության եւ դրանց ղեկավարման, նյութատեխնիկական ապահովման վերաբերյալ":

Հետագա տարիներին դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առաջընթաց չգրանցվեց, ինչով էլ պայմանավորված էր 2000թ. Վիեննայում տեղի ունեցած ԵԱՀԿ Նախարարների խորհրդի ութերորդ հանդիպման ժամանակ նրանց հայտնած մտահոգությունն ու գործունեությունը ակտիվացնելու անհրաժեշտության մասին հայտարարությունները: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հետ հանդիպումներին եւ քննարկումներին զուգահեռ՝ առանձին տեղ է հատկացվում նաեւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հետ հանդիպումներին: Գործող նախագահի հայտարարության մեջ ասված էր.

"Քննարկելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ներկա իրավիճակը՝ նախարարները խոր մտահոգություն հայտնեցին խաղաղ գործընթացում առաջընթացի բացակայության կապակցությամբ: Նրանք հանձնարարեցին ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին եւ գործող նախագահի անձնական ներկայացուցչին ակտիվացնել իրենց մանդատների կատարմանն ու հակամարտության բոլոր կողմերի միջեւ փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծմանն ուղղված ջանքերը: Նրանք ողջունեցին Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության նախագահների միջեւ ուղիղ երկխոսությունը եւ խորհուրդ տվեցին նրանց ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հետ համագործակցությամբ շարունակել հնարավորինս արագ համաձայնությունների գալուն ուղղված ջանքերը, որոնք ՄԽ

շրջանակներում լայնամասշտաբ բանակցությունների վերսկսման հիմք կհանդիսանային:

Նրանք նաև հույս հայտնեցին, որ բոլոր կողմերը կանեն իրենցից կախված ամեն ինչ շփման գծի երկայնքով հրադադարի խիստ պահպանման ուղղությամբ մինչև հակամարտության կարգավորման համակողմանի համաձայնության կնքումը, այդ թվում նաև ՄԽ համանախագահների եւ գործող նախագահի անձնական ներկայացուցչի մասնակցությամբ վստահության ամրապնդմանն ուղղված միջոցների կիրառման վերաբերյալ համաձայնության ստորագրումը:

Նախարարները հավանություն տվեցին Ստամբուլում ԵԱՀԿ գագաթաժողովից հետո (1999 նոյեմբեր) ՄԽ համանախագահների՝ այս տարածաշրջանում լարվածության նվազմանը եւ ՄԱԿ-ի ու այլ միջազգային կառույցների հետ կոորդինացված լրացուցիչ միջոցառումների մշակման ուղղությամբ ձեռնարկված քայլերին, որոնք կնպաստեն քաղաքական կարգավորմանը”:

Հանդիպմանը նվիրված փաստաթղթում տեղ է գտել նաև ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի համանախագահների զեկույցը ԵԱՀԿ Նախարարների խորհրդին Լեռնային Ղարաբաղի առնչությամբ.

“Զեկուցման ենթակա ժամանակահատվածում ԵԱՀԿ ՄԽ համանախագահները (ՌԴ, ԱՄՆ եւ Ֆրանսիա) իրենց գործունեության մեջ առաջնորդվել են ԵԱՀԿ բարձր եւ այլ մակարդակի համապատասխան որոշումներով, ԵԱՀԿ գործող նախագահի խորհուրդներով եւ ԵԱՀԿ ՄԽ մանդատի դրույթներով:

Համանախագահները շարունակում էին ջանքեր գործադրել ուղղված նրան, որպեսզի հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերը խստիվ պահպանեն հրադադարի համաձայնագիրը: Հաշվի չառնելով որոշ միջադեպեր՝ այս տարի հրադադարի խախտման լուրջ դեպքեր չեն գրանցվել: Միաժամանակ համանախագահները, հիշելով, որ այժմյան իրավիճակը չի կարող փոխարինել իրական խաղաղությանը, կենտրոնացրել են իրենց ուժերը դարաբաղյան հակամարտության ընդգրկուն կարգավորման ուղղությամբ՝ հաշվի առնելով բոլոր կողմերի օրինական շահերն ու մտահոգությունները:

Առաջնորդվելով ԵԱՀԿ ստամբուլյան գագաթաժողովի արձանագրության դրույթներով, որն ընդունվել է 1999թ.-ի նոյեմբերին, համանախագահները բոլոր կողմերի հետ աշխատանքում նպաստում էին Բաքվի եւ Երեւանի միջև բարձր մակարդակի ուղիղ երկխոսության շարունակմանը ՄԽ շրջանակներում բանակցությունների վերսկսման համար հիմք ստեղծելու նպատակով, որոնց կմասնակցեն բոլոր կողմերը: Համանախագահները եւ հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերը կարծում են, որ Մինսկի գործընթացը շարունակում է դարաբաղյան հակամարտության կարգավորման համար մնալ միակ ընդունելի ձեւաչափը:

Զեկուցման ենթակա ժամանակահատվածում նախագահներ Ալիևի եւ Քոչարյանի միջև կայացել է հինգ անմիջական հանդիպում, այդ թվում՝ 1999թ.-ի նոյեմբերին

Ստամբուլում, այս տարվա հունվարին Մոսկվայում եւ Դավոսում, օգոստոսին Յալթայում եւ սեպտեմբերին Նյու Յորքում: Մենք տեղեկատվություն ունենք, որ եւս մի հանդիպում երկու ղեկավարների միջեւ կարող է տեղի ունենալ ղեկտեմբերի 1-ին Մինսկում նախանշված ԱՊՀ երկրների ղեկավարների հանդիպման ընթացքում: Նախագահների հանդիպումները անցնում եմ դրական միջավայրում եւ փոխըմբռնման ոգով: Համոզված լինելով, որ նման ձեւաչափում բանակցությունների ներուժը սպառված չէ՝ նախագահներ Ալիևը եւ Քոչարյանը Նյու Յորքում հանդիպման ժամանակ կրկին հայտարարել են անմիջական շփումները շարունակելու պատրաստակամության մասին՝ փոխզիջումների հիման վրա խաղաղ կարգավորման հասնելու նպատակով: Այնուամենայնիվ, 1999թ.-ի վերջում այս հարցի շուրջ մեծ առաջընթաց գրանցելու միջազգային հանրության սպասումները չիրագործվեցին մի շարք պատճառներով՝ ներառյալ ներքաղաքական նկատառումները:

Ի լրումն երկու նախագահների ջանքերի՝ համանախագահները քայլեր են ձեռնարկել հակամարտությունից հետո վերականգման եւ տարհանված շրջանների հետ կապված հարցերի լուծման ուղղությամբ: Փետրվարին Ժնևում համանախագահները խորհրդակցություններ անցկացրին ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատար Ազաթայի եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նախագահ Քելլենբերգի հետ, որոնք դրական կերպով արձագանքեցին համանախագահների նախաձեռնությանը եւ հաստատեցին անհրաժեշտ պահին Հարավային Կովկասում միջազգային հանրության ջանքերին միանալու իրենց կառույցների պատրաստակամությունը: Անցյալ տարվա մայիսին Ժնևում հանդիպում իրականացվեց հիմնական միջազգային կազմակերպությունների եւ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ հանդիպման ընթացքում սկզբունքային որոշում ընդունվեց անհրաժեշտ պահին տարածաշրջան գնահատման հանձնաժողով ուղարկելու վերաբերյալ: Ձեռք բերվեց փոխհամաձայնություն, որ այդ հանձնաժողովի քաղաքական կառավարումը իրականացվելու է երեք համանախագահների կողմից, որոնք համատեղ որոշելու են վերջինիս ժամկետներն ու մանդատը:

Անցյալ տարվա ընթացքում համանախագահները երկու անգամ միասին այցելեցին տարածաշրջան՝ 1999թ. ղեկտեմբերին եւ 2000թ. հուլիսին՝ Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հետ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով: Առաջարկվեցին հակամարտության գոտում վստահության ամրապնդման համար մի շարք կոնկրետ քայլեր, որոնք իրականացվեցին կամ գտնվում են քննարկման փուլում:

Համանախագահների գործունեությունն իրականացվում է ԵԱՀԿ գործող նախագահ Բենիտո Ֆերրերո-Վալդիների հետ սերտ կոորդինացմամբ: Հուլիսին նա այցելեց Բաքու եւ Երևան, ինչի ընթացքում կայացան հանդիպումներ Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի առաջնորդների հետ, ընդգծվեց ԵԱՀԿ մասնակցության կարեւորությունը կարգավորման գործընթացին:

Համանախագահները պարբերաբար զեկուցում էին ՄԽ-ին իրենց գործունեության մասին: ՄԽ երեք նիստերը (առանց կողմերի մասնակցության) կայացան 1999թ. նոյեմբերին Ստամբուլում, 2000թ. հուլիսին եւ հոկտեմբերին Վիեննայում: Համանախագահները, ինչպես եւ նախկինում, հաստատուն աջակցություն ստացան ՄԽ անդամ-երկրների կողմից: Մինսկի կոնֆերանսի մանդատի դրույթների համաձայն եւ ի պատասխան ՄԱԿ պահանջների՝ սեպտեմբերին Նյու Յորքում համանախագահները տեղեկացրին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին դարաբաղյան հակամարտության կարգավորման ներկա վիճակի մասին եւ պատասխանեցին կարգավորման հեռանկարների վերաբերյալ քաղաքական հարցերով ՄԱԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Պրենդերգաստի հարցերին: Այդ կարծիքների փոխանակումը եւ ՄԱԿ մի շարք կառույցների դրական արձագանքը մայիսին ժնեում կայացած հանդիպման ժամանակ արժեքավոր ներդրում հանդիսացան ԵԱՀԿ եւ ՄԱԿ-ի միջեւ համագործակցության համար:

Ընդհանուր առմամբ, իրավիճակը տարածաշրջանում կայուն էր: Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցությամբ շարունակվում է ռազմագերիների ազատ արձակման փոխադարձ գործընթացը: Այս տարի ազատ է արձակվել ութ ադրբեջանցի եւ երկու հայ ռազմագերի: Այս գործընթացում կարելուք դեր խաղացին ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ դեսպան Անժեյ Կասպրչիկը եւ նրա խումբը, ում ջանքերը հակամարտության մեջ ներգրավված կողմերի բարձր գնահատականին արժանացան: Ռազմագերիների ազատումից զատ՝ նրանց դիտորդական գործունեությունը նպաստել է հատման գծի երկայնքով լարվածության նվազմանը:

Այս կոլեկտիվ ջանքերից բացի՝ համանախագահները բազմաթիվ երկկողմ միջոցառումներ են կիրառել, ներառյալ բարձր մակարդակի պատվիրակությունների գործուղումը տարածաշրջան: Երեք համանախագահ երկրների ղեկավարներն ու արտգործնախարարները պարբերաբար հրավիրում էին կողմերի ներկայացուցիչներին մասնակցելու միջազգային հանդիպումների՝ ձգտելով առաջ տանել խաղաղ գործընթացը, եւ կազմակերպում էին հանդիպումներ Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների հետ: Ղարաբաղյան հակամարտությունը մանրամասն քննարկվում էր Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների՝ Մոսկվա, Փարիզ եւ Վաշինգտոն կատարած այցերի ժամանակ: Բոլոր այդ ջանքերը գործադրվում էին Մինսկի գործընթացի ամրապնդման ուղղությամբ համաձայնեցված ռազմավարության շրջանակներում:

Զեկուցման ենթակա ժամանակահատվածում համանախագահների կազմում կադրային փոփոխություններ տեղի չեն ունեցել: Երեք երկրների ներկայացուցիչներն աշխատել են համաձայնեցված եւ կառուցողական, մի թիմի պես:

Համանախագահները հակված են կարգավորման որոնմանն ուղղված բանակցային գործընթացի շարունակմանը, որը խաղաղություն եւ անվտանգություն կապահովի այս տարածաշրջանում՝ ի նպաստ բոլոր ժողովուրդների":

2000թ.-ից ի վեր ԵԱՀԿ ՄԽ ջանքերի եւ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների բանակցելու պատրաստակամության շնորհիվ դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը նոր թափ ստացավ, եւ արդեն իսկ որոշակի համաձայնություններ ձեռք բերվեցին բանակցային սկզբունքների վերաբերյալ: Անհրաժեշտ է ցավով առանձնացնել այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի դեկլարության ներգրավվածության մասին, սակայն, այլեւս փաստաթղթերի մեջ չի հիշատակվում:

2004թ. Սոֆիայում կայացած ԵԱՀԿ նախարարների խորհրդի տասներկուերորդ հանդիպման ժամանակ դարաբաղյան հակամարտության վերաբերյալ Նախարարների խորհուրդը հանդես է եկել հետեւյալ հայտարարությամբ.

"Մենք ողջունում ենք 2004թ.-ին դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ձեռք բերված առաջընթացը եւ, մասնավորապես, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երեք հանդիպումները ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հովանու ներքո: Մենք նաեւ ողջունում ենք "փարիզյան գործընթացի" մեկնարկը, որի շրջանակներում երկու երկրների արտգործնախարարների չորս հանդիպումների ժամանակ հաջողվեց կրկին մեթոդիկ կերպով մշակել ապագա կարգավորման բոլոր չափանիշները: Մենք նշում ենք, որ ի լրումն "փարիզյան գործընթացի" արդյունքների զարգացման՝ ՄԽ համանախագահները սեպտեմբերին Աստանայում երկու նախագահներին ներկայացրին շրջանակային մի փաստաթուղթ, որը կարող է կարգավորման հիմք հանդիսանալ: Մենք կոչ ենք անում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին հաշվի առնել այդ շրջանակային փաստաթուղթը եւ շարունակել աշխատանքը դրա հիման վրա: Մենք կոչ ենք անում կողմերին կրկնապատկել դարաբաղյան հակամարտության արագ կարգավորմանն ուղղված ջանքերը ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում":

2004թ.-ի ընթացքում գործող նախագահի գործունեության մասին զեկույցում "Տարածաշրջանային հարցեր" բաժնում ասված է.

"Նախագահությունը ակտիվ դեր է ունեցել հակամարտության քաղաքական կարգավորմանն աջակցելու գործում: Բուլղարիան՝ որպես նախագահ, շարունակել է նախագահության, գործող նախագահի անձնական ներկայացուցչի եւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների սերտ համագործակցությանն ուղղված քաղաքական գիծը: Կողմերի հետ իր շփման ընթացքում գործող նախագահը հավաստիացրել է նրանց ինչպես իր, այնպես էլ ԵԱՀԿ-ի՝ հակամարտության կարգավորմանն ուղիներ փնտրելու հանձնառության մեջ եւ հայտնել իր աջակցության մասին այն դրական առաջխաղացմանը, որը ձեռք է բերվել մեկ տարվա ընթացքում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումների ժամանակ, որոնք կայացել են ՄԽ համանախագահների հովանու ներքո, ինչպես նաեւ "փարիզյան գործընթացի" շրջանակներում, որտեղ երկու երկրների արտգործնախարարները մեթոդիկ կերպով մշակել են ապագա կարգավորման չափանիշները: Հուսադրող հանգամանք է նախարարների խորհրդի՝ Սոֆիայում կայացած հանդիպման ժամանակ ընդունված համաձայնեցված հայտարարությունը դարաբաղյան հակամարտության վերաբերյալ:

Բացի այդ, գործող նախագահը խնդրեց Բուլղարիայի նախկին վարչապետ Ֆիլիպ Դիմիտրովին սեպտեմբերի 20-24-ը այցելել Հայաստան եւ Ադրբեջան՝ որպես հակամարտության հարցով իր հատուկ ներկայացուցիչ խաղաղ կարգավորման գործընթացին նոր թափ հաղորդելու նպատակով: Բաքվում եւ Երեւանում պարոն

Դիմիտրովը կրկին հայտարարեց գործող նախագահի՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների եւ իր անձնական ներկայացուցչի ջանքերին աջակցության մասին: Նա նաեւ կոչ արեց Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին նկատի ունենալ շրջանակային փաստաթուղթը, որը ներկայացվել է նրանց սեպտեմբերին Աստանայում ՄԽ համանախագահների կողմից եւ կարող է կարգավորման հիմք հանդիսանալ: Բաքվում եւ Երեւանում պարոն Դիմիտրովը հակամարտության խաղաղ կարգավորման հակման հավաստիացումներ ստացավ կողմերից:

Հակամարտության հարցով գործող նախագահի անձնական ներկայացուցչի գործունեությունը, որը ԵԱՀԿ ՄԽ քննարկման առարկա է, օգնեց նվազեցնել լարվածությունը հայ-ադրբեջանական սահմանում եւ հատման գծում, հատկապես ամռանը, երբ տեղի են ունեցել հրադադարի խախտման մի քանի դեպքեր”:

2005թ.-ի ընթացքում բանակցային գործընթացը ակտիվորեն շարունակվում է եւ արդեն իսկ իրական առաջխաղացման հույսեր ներշնչում, ինչը արտահայտված է ԵԱՀԿ նախարարների խորհրդի՝ Լյուբլյանդայում 2005թ.-ին կայացած 13-րդ հանդիպման ժամանակ:

ԵԱՀԿ ՄԽ քննարկման առարկա հանդիսացող հակամարտության վերաբերյալ հայտարարության մեջ ասված է.

“Մենք բավարարվածությամբ արձանագրում ենք առաջընթացը դարաբաղյան հակամարտության բանակցությունների գործընթացում, որը ձեռք է բերվել 2005թ.-ին “փարիզյան գործընթացի” շրջանակներում եւ մասնավորապես ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հովանու ներքո Վարշավայում եւ Կազանում կայացած՝ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երկու հանդիպումների ընթացքում: Մենք համարում ենք, որ կողմերը հասել են այն մակարդակին, երբ իրական հնարավորություն կա բանակցություններից անցնելու որոշումների ընդունման, եւ բոլորի համար լուրջ հաղթանակի իրատեսական հնարավորություններ կան: Մենք կոչ ենք անում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին, օգտվելով այժմյան ստեղծված հնարավորություններից՝ եկող տարվա ընթացքում հակամարտության կարգավորման մեջ զգալի առաջխաղացման հասնել ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում”:

Հանդիպման ամփոփիչ փաստաթղթում ասված է, որ “Վերջին տարվա ընթացքում քիչ բան չի արվել նաեւ Մինսկի կոնֆերանսի քննարկման առարկա հանդիսացող հակամարտության կարգավորման առնչությամբ. Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների, այսպես կոչված, “փարիզյան հանդիպումները” դրական արդյունքներ են տվել՝ պայմաններ ստեղծելով Վարշավայում եւ Կազանում երկու երկրների նախագահների հանդիպումների համար եւ դրանով նոր թափ հաղորդելով դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին”:

Հարավային Կովկասին նվիրված հաստատված մանրամասն նկարագրվում են 2005թ.-ի ընթացքում ԵԱՀԿ շրջանակներում ծավալված աշխատանքները, եւ դրական գնահատական է տրվում ձեռք բերված հաջողություններին:

Ինչպես նշվում է փաստաթղթում, գործող նախագահը մարտի 30-ից ապրիլի 2-ը այցելել է Հարավային Կովկաս, սեպտեմբերի 4-6-ը՝ Հայաստան եւ Ադրբեջան:

Հայաստանում եւ Ադրբեջանում գործող նախագահը ակտիվացրել է ԵԱՀԿ-ի աշխատանքներն՝ ուղղված դարաբաղյան հակամարտության երկարաժամկետ կարգավորմանը: Այդ երկու երկրներ կատարած այցերի ժամանակ գործող նախագահը սահմանագծի երկայնքով իրավիճակի կայունացման կոչ արեց: Նա եւս մեկ անգամ ընդգծեց խաղաղ գործընթացի ակտիվացման համար հնարավոր բոլոր

միջոցների օգտագործման անհրաժեշտությունը եւ հայտարարեց, որ արտգործնախարարների հանդիպումից հետո Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների անմիջական մասնակցությունն այս գործում կարելուք հանգամանք է դարձել, ինչը լրացուցիչ թափ է հաղորդել խաղաղ գործընթացին:

Փետրվարին ՄԽ հովանու ներքո կազմակերպված Փաստերի արձանագրման առաքելությունն այցելել է Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներ՝ նպատակ ունենալով տեղում ուսումնասիրել կարգավորման իրավիճակն այդ տարածքներում: Տարվա ընթացքում երկու անգամ՝ մարտին եւ սեպտեմբերին, գործող նախագահը հանդիպումներ է ունեցել ՄԽ համանախագահների հետ: Դեկտեմբերին 1997թ.-ից ի վեր առաջին անգամ ԵԱՀԿ բարձր մակարդակի պլանավորման խումբը ճանաչողական այց է կատարել Հայաստան եւ Ադրբեջան: Գործող նախագահը նաեւ աջակցել է իր անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպերչիկի կատարած աշխատանքին:

2008թ.-ը Հայաստանի համար նախագահական ընտրությունների բարդ ու անկայուն տարի էր, սակայն նույնիսկ այդ իրավիճակում Հայաստանը չի դադարեցրել բանակցությունները՝ դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին առաջնային տեղ հատկացնելով երկրի քաղաքական օրակարգում: Այդ կապակցությամբ 2007թ.-ին Մադրիդում կայացած ԵԱՀԿ Նախարարների խորհրդի 15-րդ հանդիպման ժամանակ նախարարների կողմից արվել է հետևյալ հայտարարությունը.

"Մենք հաճույքով արձանագրում ենք, որ Հայաստանը եւ Ադրբեջանը համաձայնվել են շարունակել դարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցությունները գալիք ընտրությունների տարվա ընթացքում:

Մենք աջակցում ենք ԵԱՀԿ ՄԽ միջնորդական գործունեությանը եւ կողմերի հետ համատեղ հակամարտության խաղաղ կարգավորման հիմնական սկզբունքների մշակմանը: Մենք կոչ ենք անում երկու կողմերին հաղթահարել պահպանվող վերջին հակասությունները, հավանություն տալ կարգավորման ընդհանուր հայեցակարգին եւ դրա հիման վրա անցնել համակողմանի խաղաղության պայմանագրի նախագծի մշակմանը":

Այդ հանդիպման ժամանակ ողջունվել է բանակցությունների առաջընթացը, ԵՄ անունից հայտարարությամբ է հանդես եկել Պորտուգալիան.

"Մեզ ուրախացնում է դարաբաղյան հակամարտության վերաբերյալ հայտարարության շուրջ համաձայնության ձեռքբերումը: Մենք կրկին դիմում ենք Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին՝ կոչ անելով շարունակել ամբողջ ծավալով մասնակցել բանակցություններին այս հակամարտության խաղաղ կարգավորման մի շարք սկզբունքների հիման վրա, որոնք նախապատրաստվել էին ՄԽ համանախագահների կողմից":

2008թ.-ին բանակցությունները ոչ միայն չդադարեցվեցին, այլև ընդունվեց մի կարելուք փաստաթուղթ՝ Մոսկվայի հայտարարությունը, որտեղ եւս մեկ անգամ կարելուքվել է հակամարտության՝ խաղաղ քաղաքական ճանապարհով կարգավորումը, եւ պայմանավորվածություններ են ձեռք բերվում վստահության մթնոլորտի ստեղծման շուրջ:

2008թ.-ին Հելսինկիում տեղի ունեցած ԵԱՀԿ Նախարարների խորհրդի 16-րդ հանդիպման ժամանակ Նախարարների խորհուրդը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ.

"Մենք ողջունում ենք կառուցողական եւ դրական առաջընթացը, որն առաջացել է

դարաբաղյան հակամարտության խաղաղ քաղաքական կարգավորման գործընթացում 2008թ.-ին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երկու հանդիպումներից հետո՝ հունիսի 6-ին Մանկտ Պետերբուրգում եւ հատկապես հոկտեմբերի 2-ին Մոսկվայում:

Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների կողմից ստորագրված մոսկովյան արձանագրությունը խոստումնալից փուլ է բացել հակամարտության կարգավորման գործընթացում: Մենք աջակցում ենք կողմերին բանակցային գործընթացում իրենց ջանքերն ակտիվացնելու ձգտումներում ըստ Մոսկովյան արձանագրության եւ խրախուսում ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հետ համագործակցությամբ հիմնական սկզբունքների մշակման աշխատանքների շարունակումը, որոնք կողմերին առաջարկվել են Մադրիդում 2007թ. նոյեմբերի 29-ին, ապա անցնել բազմակողմանի խաղաղության պայմանագրի ծրագրի մշակմանը: Մենք բարձր ենք գնահատում խաղաղության ամրապնդման եւ հրադադարի ամրապնդման իրագործումն առաջ տանելու նրանց մտադրությունը”:

Գործող նախագահն իր ելույթում մեջ բերեց Մոսկվայի հայտարարությունը.

“Կցանկանայի Ձեր ուշադրությունը հրավիրել մոսկովյան արձանագրության վրա, որն ընդունվել է 2008թ. նոյեմբերի 2-ին Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահների կողմից դարաբաղյան հակամարտության՝ քաղաքական միջոցներով կարգավորման ներկա վիճակի եւ հեռանկարների մասին: Այդ արձանագրության մեջ նրանք՝

1. հայտարարում են, որ կնպաստեն Հարավային Կովկասում իրավիճակի առողջացմանը եւ տարածաշրջանում կայունության ու անվտանգության մթնոլորտի ապահովմանը դարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորման ճանապարհով՝ միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի, այս շրջանակներում ընդունված որոշումների եւ փաստաթղթերի հիման վրա, ինչը տարածաշրջանում կստեղծի բարենպաստ պայմաններ տնտեսական զարգացման եւ բազմակողմ համագործակցության համար,
2. հաստատում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերի շարունակման կարևորությունը՝ հաշվի առնելով նրանց հանդիպումը կողմերի հետ Մադրիդում 2007թ.-ի նոյեմբերի 29-ին, եւ հետագա քննարկումները քաղաքական կարգավորման հիմնական սկզբունքների մշակման նպատակով,
3. համաձայնում են, որ խաղաղ կարգավորման հասնելը պետք է ուղեկցվի իր բոլոր բնագավառների եւ փուլերի իրավաբանորեն պարտավորեցնող միջազգային երաշխիքներով,
4. նշում են, որ Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահները պայմանավորվել են շարունակել աշխատանքը դարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորման համաձայնության շուրջ, այդ թվում ամենաբարձր մակարդակի հետագա շփումների ընթացքում, եւ հանձնարարել են իրենց արտգործնախարարներին ակտիվացնել հետագա քայլերը բանակցային գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ,
5. կարևոր են համարում կարգավորման ջանքերի համատեքստում վստահության ամրապնդման նպատակով միջոցառումների իրականացման համար պայմանների ստեղծման խրախուսումը:

Շնորհակալություն":

Ղարաբաղյան հակամարտությանը անդրադարձ է կատարվել նաև "Հելսինկյան ոգու վերածննդի վերաբերյալ" գործող նախագահի պատկերացումն արտահայտող փաստաթղթում.

"Մենք լի ենք ԵԱՀԿ տարածաշրջանում հակամարտությունների կարգավորմամբ առաջնահերթ զբաղվելու հաստատակամությամբ: Մենք լրջորեն մտահոգված ենք տարածաշրջանի անվտանգությամբ, մարդկանց անվտանգությամբ, հակամարտությունների բացասական հետեւանքներով եւ կրկին ակտիվացնելու ենք ջանքերը դրանց չեզոքացումն ապահովելու ուղղությամբ: Ամուր որոշումները կարող են հիմնված լինել միայն ԵԱՀԿ սկզբունքների համաձայն տարվող բանակցությունների միջոցով կարգավորման վրա: Մենք ողջունում ենք կառուցողական եւ դրական դինամիկան դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, որն առաջացել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երկու հանդիպումներից եւ 2008թ. նոյեմբերի 2-ի մոսկովյան արձանագրությունից հետո":

Մոսկովյան հայտարարությունից հետո ՌԴ միջնորդությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, որոնց արդյունքում արվել է եւս երկու կարեւոր հայտարարություն, դրանք դեռեւս իրենց արտացոլումը չեն գտել ԵԱՀԿ Նախարարների խորհրդի հանդիպումներում հնչեցված հայտարարություններում: Համենայն դեպս, ԵԱՀԿ Նախարարների խորհուրդը ԵԱՀԿ կարեւորագույն կառույցներից մեկն է, որը հետեւում է ԵԱՀԿ գործառույթների ներքո իրականացվող բոլոր գործընթացներին եւ իր գնահատականը տալիս դրանց:

“ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԸ” ԵԱՀԿ ԽՎ-ՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը ԵԱՀԿ-ի Խորհրդարանական վեհաժողովն անդրադարձել է 1994թ.-ի հուլիսի 4-8-ը Վիեննայում տեղի ունեցած նիստի ժամանակ ընդունված "Քաղաքական եւ անվտանգության հարցերի վերաբերյալ" բանաձեւում, որտեղ նշվում է. "ԵԱՀԽ ԽՎ-ն.

34. Փաստում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը բռնկվել է 1988թ.-ին եւ հազարավոր զոհերի ու մոտ մեկ միլիոն գաղթականների առաջացման պատճառ է դարձել:

35. Վերահաստատում է, որ ԵԱՀԽ-ի կողմից Մինսկի խումբը 1992թ.-ի մարտին ստեղծվել է շտապ կարգով հրադադար հաստատելու եւ հակամարտության քաղաքական լուծման համար բանակցային հող նախապատրաստելու նպատակով:

36. Ճանաչում է, որ Մինսկի խումբը ԵԱՀԽ կենտրոնական ֆորում է հանդիսանում եւ ստեղծվել է Լեռնային Ղարաբաղում արյունահեղությանը վերջ դնելու համար, այդ ժամանակվանից ի վեր մեծ ջանքեր է գործադրել՝ ցուցաբերելով անկողմնապահություն՝ չնայած շարունակական հուսահատեցնող թշնամանքին:

37. Տեղեկացված է, որ բացի Հայաստանից եւ Ադրբեջանից՝ Բելառուսը, Ֆրանսիան, Գերմանիան, Հունգարիան, Իտալիան, Ռուսաստանը, Շվեդիան, ԱՄՆ-ն եւ Թուրքիան եւս Մինսկի խմբի անդամներ են եւ հավասարապես ակտիվ մասնակցել են վերջինիս գործունեությանն ու առաջարկների ձեւավորմանը:

38. Ողջունում է այն փաստը, որ ԵԱՀԽ Մինսկի խումբը Յան Էլիասոնի գլխավորությամբ առաջ է քաշել մի նախագիծ, որը նախատեսում է հրադադարի հաստատում, գերիների ազատում, փախստականների վերադարձ, հրադադարի պահպանման հարցում միջազգային դիտորդների աջակցություն եւ հակամարտության լուծման համար բանակցություններ պատրաստում":

Ղարաբաղյան խնդրին անդրադարձ է կատարվել նաեւ 1995 թ. Օտտավայում կայացած ԵԱՀԿ ԽՎ-ի ամենամյա նիստի ժամանակ "Քաղաքականության եւ անվտանգության հարցեր. Տարածաշրջանային խնդիրներ. Լեռնային Ղարաբաղ" բանաձեւում:

"ԵԱՀԿ ԽՎ-ն.

35. Մեծապես աջակցելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Լեռնային Ղարաբաղում խաղաղությանն աջակցելու համապատասխան բանաձեւի իրագործմանն ուղղված աշխատանքներում ձեռք բերված արագ հաջողությանը, մասնավորապես ԵԱՀԿ բազմազգ խաղաղապահ ուժերին եւ ԵԱՀԿ համատեղ պայմանավորվածություններին, որոնք պետք է երաշխավորեն, որ հակամարտությունում երրորդ կողմի՝ զինված ուժի դերն ու գործառույթները համապատասխանում են ԵԱՀԿ սկզբունքներին եւ նպատակներին՝ ներառելով հարգանքն ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ, կողմերի համաձայնությունը, անկողմնակալությունը, տարբեր երկրների ներգրավվածությունը, հստակ մանդատը, թափանցիկությունը, հակամարտության

լուծման քաղաքական գործընթացի նկատմամբ բազմակողմանի մոտեցումը եւ անհրաժեշտության դեպքում գորքերի կարգավորված դուրսբերման ծրագրի մշակումը:

36. Համոզվել է, որ տարածաշրջանի տնտեսական վերականգնումն անհնար կմնա, քանի դեռ կովկասյան հանրապետությունների միջեւ չի վերահաստատվել համագործակցությունը, եւ որ անհրաժեշտ պայմաններ պետք է ստեղծվեն խաղաղարար ուժերի միավորման շնորհիվ, ինչը համագործակցության օրինակ կծառայի:

37. Նաեւ համոզվել է, որ դա կնվազեցնի հումանիտար օգնության վրա կատարվող ծախսերի չափը, որը կցուցաբերվի տարածաշրջանին այնքան ժամանակ, մինչ տնտեսական աճը խոչընդոտվում է Ղարաբաղյան հակամարտության պատճառով:

38. Հույս է հայտնում, որ Ղարաբաղում եւ նրա շրջակայքում 14 ամսից ավել տեւող հրադադարը կարող է կնքված պայմանագրի վերածվել, ինչը կբացի մեկ միլիոնից ավել գաղթած բնակչության վերադարձի ճանապարհները եւ կվերացնի շրջափակումը:

39. Ողջունում է վերջերս տեղի ունեցած գերիների եւ պատերազմի բանտարկյալների ազատ արձակումը, որը ցույց տվեց կողմերի կարողությունը՝ բաց լինել վստահության կառուցման հիմքերի համար:

40. Անհանգստություն է հայտնում, որ ներկա իրավիճակի շարունակման հետեւանքով կորուստներն ավելի մեծ կլինեն, քան խաղաղարար առաքելության արդյունքները:

41. Այնուհետեւ հայտնում է իր համոզվածությունը, որ առաքելության որոշիչ նպատակը ոչ միայն խաղաղության հաստատման կայունացումն է, այլեւ աջակցությունը գործընթացին եւ տարածաշրջանի միասնականության վերականգնումը:

42. Խորհուրդ է տալիս, որ առաքելությանը տրամադրի զգալի տնտեսական եւ տեխնիկական աջակցություն:

Կոչ է անում ԵԱՀԿ-ին եւ նրա անդամ-պետություններին.

43. Հետեւողականորեն ձգտել արագ կյանքի կոչել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 822, 853, 874 եւ 884 բանաձեւերը Ադրբեջանի օկուպացված տարածքներից հայկական տեղական զինված ուժերի արագ, ամբողջական եւ առանց նախապայմանների դուրսբերման մասին, ինչպես նաեւ կյանքի կոչել Բուդապեշտի գազաթնաժողովի որոշումը "Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ԵԱՀԿ գործողությունների մեծացման" վերաբերյալ, որը ներառում է այս որոշումների իրականացման համար հատուկ մեխանիզմների ստեղծում:

44. Խորհուրդ է տալիս ԵԱՀԿ գործող նախագահին ԵԱՀԿ համաժողովի նախագահների եւ Մինսկի խմբի աջակցությամբ կատարել անհրաժեշտ հաշվարկներ՝ նպատակաուղղված հնարավորինս կարճ ժամանակահատվածում բազմազգ խաղաղապահ ուժեր ձեւավորելու եւ դրանք Լեռնային Ղարաբաղի հակամարտության տարածքում տեղակայելու ուղղությամբ:

45. Խորհուրդ է տալիս Մինսկի խմբին աշխատել հնարավորինս մեծ օգուտ քաղել "կոնսենսուս մինուս մեկ" սկզբունքից եւ ավելի մեծ պատրաստակամություն դրսեւորել դիտորդների նշանակման, օկուպացված տարածքների ազատագրման եւ այլ հարցերի լուծմանն ուղղված իր ջանքերում:

46. Փորձել համաձայնության գալ Լեռնային Ղարաբաղի խաղաղարար առաքելության ֆինանսավորման հարցի շուրջ:

47. Անմիջապես իրականացել ԵԱՀԿ որոշումը, որը պարտավորեցնում է անդամ-պետություններին խաղաղապահ առաքելություն ուղարկել Լեռնային Ղարաբաղ, որը մինչև 1995թ.-ի վերջը պետք է կազմված լինի նվազագույնը 2000 անդամներից”:

Ղարաբաղյան կարգավորմանը անդրադարձ է կատարվել նաև Ստոկհոլմում 1996թ. ԵԱՀԿ ԽՎ-ի ամենամյա նիստի ժամանակ ընդունված "քաղաքականության եւ անվտանգության հարցեր" բանաձեռում:

"ԵԱՀԿ ԽՎ-ն.

11. Ընդգծում է ԵԱՀԿ-ի աջակցության կարելությունը համաձայնության կնքմանը կամ դրա կնքմանը նպաստելուն այնպիսի հակամարտություններում, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղը, Աբխազիան, Մոլդովայի մերձդնեստրյան հակամարտությունը, հակամարտությունը Ռուսաստանում՝ Չեչնիայում, ինչպես ԵԱՀԿ-ի հեղինակության, այնպես էլ հետագա արդյունավետ գործունեության նպատակով:

12. Դրական է գնահատում հրադադարի պահպանումը մոտավորապես երկու տարվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի հակամարտության տարածքում, ինչպես նաև բանակցությունների շարունակումը Մինսկի խմբի հովանու ներքո:

13. Ողջունում է 1996թ.-ի ապրիլի 21-ին Լյուքսեմբուրգում Ադրբեյջանի եւ Հայաստանի նախագահների համատեղ հայտարարությունը եւ "Կովկասի ազգերի միջեւ համաձայնության, խաղաղության, տնտեսական եւ մշակութային համագործակցության" մասին արձանագրությունը, որը ստորագրվել է 1996թ.-ի հունիսի 3-ին, եւ որում արտահայտված է առավելագույնս արագ ամբողջական խաղաղ պայմանագրի ստորագրմանն ուղղված բանակցությունների խորացման պատասխանատվությունը:

14. Վերահաստատում է իր համաձայնությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1993թ.-ին ընդունած 822, 853, 874, 884 բանաձեռներին՝ օկուպացված տարածքներից անմիջապես, ամբողջովին եւ առանց նախապայմանների գորքերի դուրսբերման վերաբերյալ:

15. Հաշվի է առնում ԵԱՀԿ Մինսկի խմբի ակտիվ գործունեությունը՝ ուղղված զինված հակամարտությունը քաղաքական համաձայնության միջոցով լուծելուն:

16. Ընդգծում է բանակցությունների ձգձգված բնույթը, որը փաստացի հակասում է ԵԱՀԿ Բուդապեշտի գազաթնաժողովի որոշմանը "Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵԱՀԿ գործունեության արդյունավետության մեծացման վերաբերյալ":

17. Չեղյալ է հայտարարում 1995թ.-ին Օտտավայում ԵԱՀԿ ԽՎ-ի հայտարարությունը "Անմիջապես իրականացել ԵԱՀԿ որոշումը, որը պարտավորեցնում է անդամ-պետություններին խաղաղապահ առաքելություն ուղարկել Լեռնային Ղարաբաղ, որը մինչև 1995թ.-ի վերջը պետք է կազմված լինի նվազագույնը 2000 անդամներից":

Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ԵԱՀԿ ԽՎ-ի դիրքորոշմանն ավելի խորապես ծանոթացնելու նպատակով ներկայացնում ենք նաև Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ զեկույցը:

**"Ոսկե հնարավորություն՝ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ որոշ
նկատառումներ**

Ձեկույց

**Ներկայացված է Լեռնային Ղարաբաղի հարցով
հատուկ ներկայացուցիչ Գորան Լենարկերի կողմից**

ԵԱՀԿ ԽՎ ամենամյա նստաշրջան,

Վաշինգտոն, հուլիս, 2005թ.

1. Հայաստանն ու Ադրբեջանը բանակցություններ են վարում Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման շուրջ: ԵԱՀԿ Մինսկի խումբը ապահովում է ընթացիկ ձեռնարկներ եւ աջակցում է այդ գործընթացին:
2. Նոր պատերազմը՝ որպես այլընտրանք տվյալ գործընթացին, անընդունելի է: Այն իր հետ նոր տառապանքներ, նոր ականներ, զոհեր ու վիրավորներ կբերի: Վստահության մնացորդներն իսպառ կվերանան:
3. Այսպիսով՝ ակնհայտ է այնպիսի լուծում գտնելու անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա վերջ դնել մարդկանց տառապանքներին, երկու կողմերի տնտեսական եւ հանրային կորուստներին: Չափազանց կարելու է ընդգծել, որ ժամանակ ձգձգելը ձեռնառու չէ կողմերից ոչ մեկին:
4. Լուծումը պետք է հիմնված լինի ոչ թե ուժային քաղաքականության եւ երկակի ստանդարտների, այլ միջազգային նորմերի եւ եվրոպական արժեքների վրա:
5. Եվրոպական նորմերն ու ստանդարտները, որոնք սահմանվում են եվրոպական կառույցների անդամ-պետությունների կողմից համաձայնեցված պարտավորություններով, փորձություն են անցել եւ ընդունվել բազում երկրներում: Հարավային Կովկասի տարածաշրջանի համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Բալկանյան երեք երկրների փորձը, որոնք ավելի քիչ քան 15 տարի առաջ Հայաստանի ու Ադրբեջանի պես խորհրդային երկրներ էին:
6. Հակամարտությունների կարգավորման եւ ինտեգրման եվրոպական մոդելը, որը հիմնված է փոքրամասնությունների իրավունքները հարգելու վրա, կարող է Ղարաբաղյան եւ Հարավային Կովկասի այլ հակամարտությունների վերջնական լուծման օրինակ ծառայել:
7. Այդ մոդելը ձեւավորվել է հակառակ դարեր շարունակված հակամարտությունների եւ պատերազմների: Անցյալի սխալները կրկնելու փոխարեն Եվրոպայի ժողովուրդները որոշել են միասնական ապագա կառուցել, որում իրենք կապրեն ազատության, բարգավաճման եւ միմյանց առանձնահատկությունների եւ ավանդությունների պահպանման պայմաններում:
8. Ինչպես Հայաստանը, այնպես էլ Ադրբեջանը արդեն ԵԱՀԿ, Եվրոպայի Խորհրդի եւ ՆԱՏՕ-ի "Գործընկերություն հանուն խաղաղության" ծրագրի անդամ-երկրներ են: Նրանք ԵՄ-ի հետ Գործընկերության եւ համագործակցության պայմանագիր են կնքել եւ շուտով կընդգրկվեն վերջերս ընդունված Եվրոպական հարեւանության քաղաքականությունում:

9. Այդ հակամարտությունը հիմնականում անցյալի ժառանգություն է՝ պարտադրված երկու կողմերին՝ հաճախ բնակչության նկատմամբ արտաքին ուժերի բռնի քաղաքականության հետեւանքով: Հայաստանն ու Ադրբեջանը տառապել են ագրեսիայի եւ դաժանության երկարատեւ պատմությունից, եւ երկու պետությունն էլ պետք է համոզված լինեն, որ նմանատիպ պատմական իրականություն այլեւս չի կրկնվի:
10. Հայաստանի անհանգստության հիմնական առարկան ազգային անվտանգությունն է: Օսմանյան, Ռուսական եւ Խորհրդային կայսրությունների կազմում ծանր պատմական ժամանակաշրջանում արմատավորվել է անապահովության, սեփական ինքնությունը կորցնելու եւ ժողովրդին սպառնացող վտանգի զգացողությունը:
11. Ադրբեջանի անհանգստության հիմնական առիթն անարդարությունն է: Երկրի զգալի մասն օկուպացված է, եւ միլիոնավոր մարդիկ գաղթականներ կամ ներքին տեղահանվածներ են դարձել: Արդյունքում ձեւավորվել է այն պատկերացումը, որ Ադրբեջանն ագրեսիայի գոհ է:
12. Հայաստանի համար կարեւոր է վերացնել Ադրբեջանի հիմնական անհանգստությունը: Ինչպես եւ Ադրբեջանի համար կարեւոր է վերացնել Հայաստանի անհանգստության պատճառները: Հակառակ դեպքում գործընթացը հաջողություն չի ունենա:
13. Երկու կողմերն էլ ընդգծում են հակամարտության պատմական, բայց ոչ էթնիկ կամ կրոնական բնույթը: Այնուամենայնիվ պատմության մեկնաբանության հարցում շատ տարբերություններ կան: "Ճշմարտության եւ հաշտեցման" անաչառ կոմիտեն պետք է աշխատի անցյալի օբյեկտիվ եւ ընդհանուր ընկալման գալ: Դա հավասարապես կարեւոր է նրանց համար, ովքեր տուժել են, եւ նրանց, ովքեր ձգտում են վերականգնել արդարությունը:
14. Եկող սերունդները չպետք է կրկնեն իրենց նախնիների սխալները: Հակամարտության հարատեւ լուծման համար օպտիմալ պայմաններ են անվտանգությունը, ժողովրդավարությունը եւ օրենքի գերակայության պայմաններում զարգացումը:
15. Ամուր խաղաղության հիմքում պետք է դրված լինի "երկակի հաղթանակի" կոնցեպտը, որի դեպքում շահող կողմ են հանդիսանում եւ Հայաստանը, եւ Ադրբեջանը: Դրան հասնել կարելի է միայն դինամիկ ինտեգրացիոն գործընթացի շրջանակներում, որի դեպքում միաժամանակ տեղի է ունենում ազգային անվտանգության, ժողովրդավարության ամրապնդում եւ երկու կողմերի զարգացում: Այդ գործընթացը պետք է կառուցվի համագործակցության հիմքի վրա, այլ ոչ թե արտաքին ճնշման տակ: Երկարատեւ համագործակցությունը պետք է ունենա կամավոր բնույթ, եւ ոչ ոք չի կարող հարկադրված լինել մասնակցելու դրան:
16. Այդպիսի որոշման հիմք պետք է հանդիսանա վստահությունը, որի ձեւավորումը ժամանակ կպահանջի: Դա եւս մեկ փաստարկ է հոգուտ անհապաղ գործողությունների անհրաժեշտության:
17. Եվրոպական ինտեգրացիայի փորձը վկայում է չորս պայմանների անհրաժեշտության մասին
 - Առաջին՝ մասնակից երկրները պետք է գիտակցեն, որ իրենց ազգային անվտանգությանը ոչինչ չի սպառնում: Անվտանգության մեջ գտնվող

հարեւան ունենալը նշանակում է ապահովել սեփական անվտանգությունը:

- Երկրորդ՝ պետք է հարգված լինեն ժողովրդավարության, մարդու եւ փոքրամասնության իրավունքների գերագույն ստանդարտները: Դրա շնորհիվ այլ պետությունների կառավարությունների մոտ ձեւավորվում է վստահություն տվյալ երկրների նկատմամբ: Ոչ ժողովրդավար իշխանություններն իրենց էությանը կայուն չեն:
- Երրորդ՝ տնտեսական ինտեգրումը ընդհանուր բարգավաճման հիմքի վրա ամուր փոխկապակցվածություն է ձեւավորում, դա զարգացման առավել ամուր հիմք է, քանի որ առնչվում է ամբողջ բնակչությանը: Չկան պատճառներ, որպեսզի Հայաստանի եւ Ադրբեջանի բնակիչները չկարողանային ունենալ եվրոպական արժանի կենսամակարդակ:
- Չորրորդ՝ ինտեգրման գործընթացը ամրագրվում է քաղաքացիների՝ հատկապես երիտասարդության, տեղաշարժման ազատությամբ:

18. Միջազգային հեղինակավոր կառույցները պատրաստակամ են աջակցել Հայաստանին եւ Ադրբեջանին բոլոր չորս պայմանների իրականացման ճանապարհին: ԵԱՀԿ-ն ապահովում է գործընթացի շրջանակները եւ օժտված անվտանգության համապարփակ հայեցակարգ ունի: ՆUSO-ն եւ նրա "Գործընկերություն հանուն խաղաղության" ծրագիրը ազգային անվտանգության եւ փոխադարձ վստահության ամրապնդման մեծ փորձ են կուտակել: Եվրոպայի խորհուրդը ժողովրդավարությանը, մարդու եւ փոքրամասնությունների իրավունքների պահպանմանն աջակցելու մեխանիզմներ եւ ստանդարտներ է մշակում: ԵՄ-ն եւ Եվրոպական հարեւանության քաղաքականությունն ապահովում են եվրոպական ներքին շուկային աստիճանական ինտեգրման գործընթացը, ինչը բարգավաճման ամենահզոր ուղիներից է: Միաժամանակ հենց իրենք՝ կողմերը, պետք է առաջին հերթին ապահովեն տեղաշարժման ազատությունը, որը ավելի երկարաժամկետ հեռանկարներ կստեղծի նաեւ եվրոպական մակարդակով: Հայաստանին եւ Ադրբեջանին բացառիկ հնարավորություն է ընձեռվել օգտվել միջազգային այդ աջակցությունից: Դա մեծահոգի առաջարկ է եւ այն չի կարելի բաց թողնել:

19. Եթե դիտարկենք ավելի լայն հեռանկարները, ապա Հայաստանն ու Ադրբեջանը կարող էին Վրաստանի հետ համատեղ ստեղծել անվտանգության, ժողովրդավարության եւ զարգացման ընդհանուր տարածք: Հարավկովկասյան երեք պետությունների իշխանություններին առաջարկվում է ընդունել այս ներգրավման առաջարկությունը եւ ակտիվորեն շարունակել դրա մշակումը՝ հասցնելով այն աստիճանի, որը, իրենց կարծիքով, համապատասխանում է իրենց երկրների շահերին:

20. Ընդլայնված խաղաղության գործընթացը հասարակական լայն աջակցության եւ խորհրդարանական գնահատման կարիք է զգում: Դրան պետք է աջակցեն քաղաքական բոլոր շրջանակներն ու ՁԼՄ-ները: Ինտեգրման գործընթացը կարգելակվի, եթե երկրներից մեկի ՁԼՄ-ները, ընդդիմադիր քաղաքական կուսակցություններն ու հասարակությունը կամ արտերկրում գտնվող ազդեցիկ խմբերը մյուս երկրի նկատմամբ թշնամանք դրսևորեն: Մասնավորապես այդ գործընթացին կարող են վնաս հասցնել կողմերից մեկի՝ մյուսին ուղղված ագրեսիվ հայտարարությունները:

21. Ժամանակակից ինտեգրված աշխարհում օկուպացիան անընդունելի է: Այն տարածքի զինաթափումը, որը նախկինում մի կողմին էր պատկանում, ուղիղ ռազմական օգուտ չի տա մյուս կողմին:
22. Կարելորագույն նշանակություն կունենա, համենայն դեպս, անցումային շրջանում, վերահսկողական համակարգի հաստատումը զինաթափված շրջանների վերահսկման համար: Այդ նպատակով, ինչպես նաև մոնիթորինգի եւ Լեռնային Ղարաբաղի ու շրջակա՝ Ադրբեջանի շրջանների անվտանգության ապահովման շահերից ելնելով՝ կարող են ստեղծվել միջազգային կանխարգելիչ ուժեր:
23. Պետք է համաձայնեցված քայլեր ձեռնարկել ականապատված տարածքների ականազերծման ուղղությամբ: Դրա համար միջազգային ուժերի եւ փորձագետների կարիք կզգացվի:
24. Բացառապես կարելոր նշանակություն ունի Հայաստանը եւ Ադրբեջանը կապող ճանապարհների եւ երկաթգծերի վերականգնումը: Պետք է ամուր կապ հաստատվի Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև Նախիջևեանի եւ Ադրբեջանի միջեւ:
25. Բոլոր սահմանները, ինչպես նաև արտաքին սահմանները, երկու պետությունների միջեւ պետք է բաց լինեն: Մյուս պետությունները պետք է չեղյալ հայտարարեն բոլոր տեսակի պատժամիջոցները:
26. Յուրաքանչյուր անհատ՝ հատկապես այս կամ այն փոքրամասնության ներկայացուցիչ, պետք է իր բնակության վայրում իրեն անվտանգության մեջ զգա: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը, ներառյալ փոքրամասնությունների իրավունքները, ինչպես նաև քաղաքական մշակույթը, որը ենթադրում է օրենքի գերակայությանը բազմակողմանի աջակցությունն ու փոքրամասնությունների իրավունքների նկատմամբ հարգանքը:
27. Բանակցությունները պետք է բերեն այնպիսի լուծման, որը վերջ կդնի գաղթականների եւ ներքին տեղահանվածների տառապանքներին: Այս համատեքստում ուշադիր ուսումնասիրման կարիք ունեն գաղթականների վերադարձի եւ ներքին տեղահանված անձանց, ինչպես նաև կորցրած սեփականության խնդիրները:
28. Հակամարտության հիմքում ընկած է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Ժամանակակից ինտեգրման հիմքի վրա Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ համաձայնության ձեռքբերումը զգալիորեն կհեշտացնի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի լուծումը: Սահմանների բացման եւ ինտեգրված տնտեսության կառուցման պարագայում տարածքի վերահսկման դերը կկորցնի նախկին կարելորությունը, եւ դրա հետ կապված ավելի քիչ հակասություններ կծագեն:
29. Ինքը՝ Լեռնային Ղարաբաղը, ձգտում է անկախ պետություն դառնալ: Միաժամանակ ավելի լայն Կովկասյան տարածաշրջանում բազում փոքր միություններ են բնակվում: Տարածաշրջանի մասնատումը շատ փոքր անկախ պետությունների վտանգավոր է եւ չի կարող այլընտրանք հանդիսանալ: Հենց այդ պատճառով միջազգային հանրությունը պատրաստ չէ անկախություն տրամադրել այս տարածաշրջանի տարբեր շրջաններին՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղին: Սակայն հնարավոր տարբերակ է մնում Հայաստանի հետ միավորման Լեռնային Ղարաբաղի այս կամ այն մեխանիզմի կիրառումը: Այն

- կարող է ամենաբազմազան ձեւերն ունենալ: Հայաստանը ձգտում է Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման հասնել, եւ նման տարբերակը Լեռնային Ղարաբաղի համար առավելագույն անվտանգություն է ապահովում:
30. Հնարավոր լուծումներից մեկը անջատումն է, մյուսը՝ ինքնավարությունը: Հնարավոր է արդյոք անել այնպես, որ ինքնավարության տրամադրման վրա հիմնված հարցի լուծումը ձեռնտու լինի երկու կողմերին էլ: Ես՝ որպէս շվեդ, իմ սեփական փորձից կասեմ, որ այո՛: Ալանդական կղզիները, որոնց բնակչությունը խոսում է բացառապէս շվեդերեն եւ իրեն շվեդական մշակույթի կրող է համարում, Ազգերի լիգայի որոշմամբ ընդգրկվել է Ֆինլանդիայի կազմում: Նրանց ինքնավարությունը պահպանվում է 84 տարվա ընթացքում՝ ներառյալ պատերազմի եւ Ֆինլանդիային բաժին ընկած ծանր փորձությունների տարիները, սակայն Ալանդական կղզում բնակիչները երջանիկ են Ֆինլանդիայի մաս լինել: Հաշվի առնելով այն, որ երկու կողմերն էլ ինտեգրված տնտեսություն են ձեւավորում, եւ նրանց միջեւ ապահովվում է ազատ տեղաշարժը, բացի այդ՝ նրանց բնորոշ են ընդհանուր կրոնական պատկանելությունը՝ նման որոշումը արժանի է, որպէսզի օրինակ ծառայի մյուսների համար: Այսօր Ալանդական կղզիները Եվրոպայի ամենահարուստ եւ զարգացած շրջանների ցանկում են:
31. Ադրբեջանը կցանկանար իր սահմաններում, հաշվի առնելով եվրոպական երկրների փորձը, Լեռնային Ղարաբաղին ինքնավարության հնարավորինս բարձր մակարդակ տրամադրել, որը գոյություն ունի աշխարհում, ի դեպ, այդ դեպքում նա ստիպված կլինի մեծ զիջումների գնալ՝ Ադրբեջանը ստիպված կլինի Լեռնային Ղարաբաղին ջերմ ընդունելություն ցուցաբերել, որպէսզի վերջինս իրեն պարտված թշնամի կամ օկուպացված տարածք չզգա: Դրանից հետո առաջին քայլը պետք է լինի ուղիղ փոխադարձ կապերի հաստատումը: Լեռնային Ղարաբաղին անհրաժեշտ կլինի սեփական ինքնօրինակությունը պահպանելու հնարավորություն տրամադրել, իսկ բնակչությանը անհրաժեշտ կլինի համոզել, որ իր իրավունքները Ադրբեջանի սահմաններում պաշտպանված կլինեն հուսալի, անկախ իրավական համակարգով: Ցանկացած բարձր մակարդակի ինքնավարության տրամադրման համար անհրաժեշտ է զգալի ֆինանսական աջակցություն, որը լրացուցիչ ծանրաբեռնվածություն կստեղծի Ադրբեջանի ազգային բյուջեի համար":